— Վա՜տ մարդիկ, Սան–Մինիադոն ան առեն պիտի առնէք երբ որ Նմբօլի էշերը թռչին :

Նմբօլի կոմսը այս յանդուգն ճամարտակութիւնը լսելուն պէս, երկրորդ օրը հրամայեց որ բոլոր բանակը գինեալ ժողվուի Նմբօլի հրապարակին՝ զանգակատան չորս կողմը, որուն տակը լերան պէս դիզուած էին մեծ ու պզտիկ բարձեր :

Նայիս զանգակի ձայն մ'ելաւ. ամէնքը մէկէն աչուընին վեր առին, և ինչ տեսնան. զանգակատան ճեմելիքին վրայ էր կոմսը, և իր ետևը քանի մը զինուորներ որ կը տանէին մանաւանդ թէ կը քաշքըշէին էշ մը, որուն մարմինը, վիզը, սրունքները աներևոյթ եղեր էին իրեն վրայ հաստատուած լաթերուն տակ :

Երկրորդ զանգակի ձայն մը հրամայեց որ լռութիւն ըլլուի :

— Կտրիճ հպատակներս, պոռաց կոմսը, մեր նենգաւոր թշնամին կարծեց որ պիտի ուշացնէ իր կորստեան ժամը, մեր յաղթութիւնը այն օրուան ընծայելով յորում էշերը թռչին : Շատ աղէկ, այսօր, այսօր իսկ արևը մարը չմտած՝ Սան–Մինիադոյ մեր ձեռքը պիտոր իյնայ, վասն զի Նմբօլի էշերը կրնան և գիտեն թռչիլ : Աչուընիդ աղէկ բացէք :

Կոմսը նշան մ'ըրաւ, և զինուորները առաջ կը հրեն խեղճ իշուկը, որ իր ցեղին պապենական սովորութեանը համեմատ ուզեց ետ քաշուիլ. ճեմելիքին եզերքը կը հասնի, և ոտուըները կ'արձըկէ.... ժողովրդեան մէջ անբացատրելի տագնապ մը կ'իյնայ :

Պարոն յաւանակը տեսնալով որ թաթերը գետնէն կտրուեցան, բոլոր ուժը կը թափէ ոտից կռուան մը գտնալու, և ահա վրայի լաթերը կը բացուին, կը տարածուին, կը ծփան օդուն մէջ, և կը դանդաղեցնեն առաջին անգամ թռչիլ սորվող չորքոտանւոյն վար իջնալը, որ ողջ առողջ կ'իյնայ դէզ դէզ շարուած կակուղ բարձերուն վրայ, և օրինաւոր վախը քիչ մը փարատելէն ետքը կը սկսի հի՛հաւն հի՛հաւն կանչել անանկ սաստիկ ձայնով որուն նմանը ոչ երբէք լսեր էին Դոսգանայի բոլոր գաւառները :

Որոտաձայն ծափահարութիւնք կը ծածկեն զերդիւցազնեայ իշուկին գեղգեղանքները :

— Էշը թռա՜ւ, էշը թռա՜ւ, կ'ըսեն ամէն կողմանէ :

Կոմսը որ անհամբերութեամբ կ'ուզէր ժողովրդեան երևնալ, բայց խոհեմութիւն սեպեց իշուն ճամբով զանգակատունէն վար չիջնալը, հասաւ վերջապէս սուրը մերկացած :

— Էշը թռա՜ւ, զուրցեց ինքն ալ, էշը թռա՜ւ. Սան–Մինիադոյ մերն է :

— Այո՛, այո՛, էշը թռաւ. հապա երթանք Սան–Մինիադոյ. Սան–Մինիադոյ, կը կրկնէ ժողովուրդը սուրերը շողացնելով, երթանք Սան–Մինիադոյ :

Կ'ելլեն Նմբօլիէն և կը հասնին թըշնամեաց ամրոցին առջևը, և այս անգամ կտրիճ զինուորներուն թափին դիմաց բան մը չկրնար դիմանալ :

Ամրոցը կ'առնուի, մէջինները սուրին բերանը կ'իյնան, և տեղւոյն իշխանը կը բռնադատուի յաղթականին ամէն բաժնները կատարելու :

Երբոր դարձան Նմբօլի յաղթանակաւ պըտըտոցուցին էշը :

Այն առենէն 'ի վեր այս նշանաւոր յաղթութեանս օրը Նմբօլիի հանդիսի օր մ'եղաւ, յորում ականջեղ չորքոտանին կը կրկնէ իր երևելի նախորդին ըրած քաջութիւնը, բայց Ցոլսէփին բաժին նայելով կ'երևայ թէ երբեմն չհասնիր իր յաղթանակն ալ տեսնալու ու մէյմը գետին իյնալէն ետքը ա՛լ հոն կը մնայ :

ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

Հեռագրութեան հրաշալիքը. — Ամէն տարի Գաղղիոյ խորհրդարաններուն բացման օրը հեռագրատանց համար արտաքոյ կարգի աշխատութեան

որ մ'է, վասն զի ոչ միայն կայսեր բանախօսութիւնը աշխարհքէ աշխարհք պիտի հաղորդուի, այլ և շատ մը երկայն տեսութիւններ և մեկնութիւններ որոնք մէկէն 'ի մէկ կ'ըլլուին անոր վրայ՝ հաղիւ թէ կայսրը կը դադրի խօսելէ: Նախընթաց օրը հրաման կ'ելլայ որ աղէկ աչք մը տան թելերուն և գործիներուն. իւրաքանչիւր պաշտօնատէր սովորականէն դուրս աշխուժութիւն և փոյթ մը կը ցուցնէ: Զարմանալի բան է տեսնալ այն օրը Բարիզու գլխաւոր հեռագրատունը. երկու հարիւր հոգի պատրաստ տեղերնին կեցած՝ կը սպասեն նշանի. երբոր նշանը կը տրուի՝ կը բաժնեն իրենց կայսերական բանախօսութեան մէկ քանի օրինակները, և շուտ մը գործիքները բանիլ կը սկսին, որով աշխատութեան սկիզբը և լմընալը մէկ կ'ըլլայ: Հետևեալ թիւերը բաւականապէս կը ցուցնեն թէ ինչպիսի արագութեամբ ամէն աշխարհք կը հասնի Գաղղիոյ վեհապետին ճառը.

Լոնտրա կը հասնի տասուերեք վայրկեանէն, չորս այլ և այլ թելերով.

Պեռլին մէկ թելով ժամուան մը և տասը վայրկենի մէջ.

Ֆլորենցա մէկ թելով ժամուան մը և քսանուհինգ վայրկենի մէջ.

Մարսիլիա երկու թելով քսանևինը վայրկենի մէջ.

Լիոն երկու թելով քսան վայրկենի մէջ.

Լիմոժ երկու թելով տասնըութը վայրկենի մէջ.

Լիլ երկու թելով քսանուհինգ վայրկենի մէջ.

Տիժոն երկու թելով տասնըեօթը վայրկենի մէջ:

Անանկ որ նոյն իրիկունը ոչ միայն Գաղղիա այլ և ամբողջ Եւրոպա և Ամերիկա կրնան կարդալ զայն: Տասնուհինգ տարի առաջ որու մտքէն անցած էր այսպիսի բան մը: Այսօրուան օրս հեռագրութեան ըրած յառաջադիմութեանը հսկայաքայլ ալ ըսենք նէ՝ քիչ կու գայ. ոչ լեռներ արգելք են իրեն և ոչ ծովեր. իրարու կը կապէ հին և նոր աշխարհքները, և քիչ ատենէն պիտի ծածկէ երկրագունտնիս իր անթիւ թելերուն ցանցովը:

Լուսանկարին մէկ նոր յայտնուած օգտակարութիւնը. — Քանի մը տարի կայ որ Վաւկնէր անունով անգղիացի լուսանկարիչ մը գոլլոտինի վրայ հանեց եզան մը աչքը՝ մորթուելէն անմիջապէս ետքը, և մանրացուցով տեսաւ որ կենդանւոյն տեսողական գործարանին վրայ նկարուած էին սպանդանոցին պատերը և պատուհանը և մսագործը որ թևը վերուցած զարնելու կը պատրաստուէր: Այս ամէն բանս անդրադարձեր էր աչքին ցանցաթևակին մէջ իբրև մթասենեկի մը պատին վրայ, և պատկերը հաստատ դրոշմուած էր՝ աչքը նոր տպաւորութիւն մ'ընդունած չըլլալով: Սկզբան հաւատք չընծայուեցաւ լուսանկարչին պատմութեանը. բայց ահաւասիկ ուրիշ դիպուած մ'ալ որուն ստուգութիւնը անժխտելի է: ժամանակ անցնելէ ետքը Բարիզու շրջակայքը կին մը կը սպաննուի. ոստիկանութիւնը շատ ետևէ կ'իյնայ յանցաւորը գտնելու համար, բայց չյաջողեր. մէյմ'ալ սպանելոյն աչքին վրայ՝ որ սաստիկ վախէն լայնցեր էր՝ կը տեսնեն սպանողին դէմքը. կարճահասակ և մեծղի մարդ մը կ'երևար, դաժան երեսով, սրակն, մօրուեղ և երեսունըհինգի քառասունի մէջտեղերը. միով բանիւ դատաւոր մը յանցաւորը ճանչնալու համար ասկէ աւելի հաւատարիմ և ճշմարտախօս պատկերի մը չէր կրնար փափագիլ:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՂԱԶԱՐՈՒ